ԲԱՐԵԽԱՒՍ ՈՒՆԵԼՈՎ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՁՍՈՒՐԲ ԵՍԱՅԻ ԵՒ ՁԵՐԱՆԵԼԻ ՀԱՐՍՍ ԵՍՎԱՂԱՆ ԱՐԱՐԻ ՎԱՍՆ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՑ ՁՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՍ ՁԱՅՍ

Եսվաղան կամ Արսվաղան է անուն արքային Աղվանից։ 'ի խնդրոյ սորա տրար նշանագիր ազգին Աղվանից Ս. Վարդապետն Մեսրովբ (420)։ Ուստի գրեալ է տապանագիրս 'ի ժամանակս Ս. Սահակայ և Մեսրովբայ և թագաւորին Արսվաղանայ, որպէս յայտնի կացուցանեն հընութիւնք տառիցն։

Դարձեալ առանձին տապանագիր մուզայիւք յայլուր։

ՎԱՍՆ ԱՂԱՒԹԻՑ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԹԵՒԱՑ ԱԲԱՍՈՒ ԵՒ ՄԱՒՐԿԱՆ

Սոքա չգտանին 'ի Պատմագիրս՝ թերեւս իցեն յաղգէ Աղվանից։ Զայսոսիկ Հայկական հնութիւնս վանահայրն Ռուսաց պահեաց ղգուշութեամբ։

Յարեւմուտս կոյս և կից սոյն վանաց՝ դտաւ դարձեալ վանք Յունաց ձեռամբ սոյն վանահօր. եկեղեցին յատակեալ կիսով չափ սպիտակ մարմարիոնեաւ ներկեալ արեամբ Քրիստոնէից՝ և մնացեալքն մուզայիւք, և 'ի մէջ եկեղեցւոյն գերեզման մի Յունական տապանագրաւ. յայսմ տեղւոջ եւս կանգնեաց վանահայրն եկեղեցի վայելուչ կոփածոյ քարամբք և գմբեթաւոր։

3°. Մժավանքն (*) *յանուն արքոյ Քառասնից՝ մերձ 'ի նա, զոր Տաճիկք ունին։*

Այս վանք է 'ի հիւսիսային կողմն Ս. Կարապետի իբրեւ քարընկէց մի. հիմունք, շրջապատ որմոց միայն երեւին այժմ. 'ի կեդրոնի կանգնեալ են Արաբացիք գմբէթ և կոչեն ըստ բարբառոյ իւրեանց Գոռ-պէզ էլ-արպային ըռհաթէ, գմբէթ 40 Մարտիրոսաց ըստ առաջին անուան իւրոյ, և մի մասն գերեզմանատուն գիւղականաց։ Աստ եւս գոն գերեզմանք նախնեաց մերոց, բայց ծածկեալ են Արաբացիք։

(*) Թերեւս Մժեժ։